

դուրսն տալու մեղքը Մահանալուց անմիջապես հետո հավաքվում էին ընտանիքի անդամները, նախագահը և նախագահի տեղակալը, որոնք հետագայում էին հարադատներին, նախագահին դուրս տանում, կամի տախտակի վրա լողացնում: Մինչև այդ հասած էին լինում քահանան ու ժամհարրի վերջինս մի քանիսի ուղեկցությամբ բերում էր նաև նաշ կոշիկած եկեղեցական պաշտարան ու ծածկոցները: Նախագահին փաթաթում էին այդ ծածկոցներից մեկի մեջ, դնում նաշին, մյուսով ծածկում նաշը և քահանայի, բարեկամների ուղեկցությամբ նախագահը տարվում էր եկեղեցի: Այնտեղ ժամհարը վառ ճրագ էր դնում նախագահի սնարին ու դուրս էին դալիս, նախագահին թողնելով իր պաշտպան հրեշտակների հետ: Իսկ տանը նախագահի հաղուսան ու անկողինը, ներառյալ խսիրը, արդեն տալովում էր խորթանոց կամ մի այլ աչքից հեռու տեղ ու պահվում: Մեղքի անկողնի անդը խունկ էր ծխվում:

Մահացության դեպքում ոչ ոք չէր հրավիրվում: Դալիս էին ամենքն ու յուրաքանչյուրն իր ծառայությունն էր մատուցում: Նստում էին վշտահարների կողքին, որ նրանք մեռնակ չմնան, դրադեցնում էին նրանց միաբեր, որ դոնե ժամանակավորապես դադարեն սգալ: Դա տեղում էր օրեր ու շաբաթներ, եթե նախագահը այնպիսի տարիքի էր, որ խոր վիշտ էր պատճառել հաջորդատներին:

Հաջորդ օրը նորից էին հավաքվում նախագահի սուրնը և եթե նախագահը մահուկ էր կամ կին, ապա նրա պատանը կարելու և թաղելու էին դնում տարեց կանայք: Եկեղեցում մի պառավ կարում էր պատանը, նախօրոք նախագահի քթածա-

կերն ու շուրթերի արանքը խունկ մտցնելով: Նաշի ետևից էլ՝ դերեղմանատուն, կանայք էին գնում ու թաղելուց հետո վերադառնում էին մեղքի տուն: Իսկ եթե նախագահը պատանյակ էր կամ տղամարդ, նաշին հետևողները և՛ տղամարդիկ էին լինում, և՛ տարեց կանայք:

Եթե նախագահին թաղում էին պատարագով, ապա թաղումից առաջ, եկեղեցում երեկոյան կատարվում էր հոգեհանգիստ՝ քահանայի և տիրացուների մասնակցությամբ, հաջորդ օրը, կեսօրին, պատանքը կարելուց հետո կատարվում էր պատարագ: Նախագահին եկեղեցուց մինչև դերեղմանատուն տանում էին եկեղեցական լրիվ կազմով՝ ղեկստավորված և շարականներ երգելով: Պատարագով թաղվածի համար տրվող հոգեհանգիստ մոթվում էր եղ կամ կով՝ ըստ նախագահի հիվանդ ժամանակ տված պատվերի: Հոգեհանգիստ մատուցելուց բացի, բաժանվում էր ըուրը տներին: Չտանելն էլ մեղք էր համարվում, մերժելն էլ:

Բոլոր դեպքերում էլ, հաջորդ օրը դնում էին խունկ ծխելու խունկ ծխելու էին դնում նաև մահվան յոթերորդ օրը: Այդ օրը լվանում էին նախագահի հանդերձն ու անկողինը: Հանդերձն այնուհետև բաժանում էին աղքատներին:

Քառասուններորդ օրը նախագահի հարադաններին սղից հանելով էին ղրաղվում: Տարեց, թե երիտասարդ աղամարդկանց երեսն էին ածիլում, կանանց լողացնում, մայրամուտից առաջ դնում էին դերեղմանին այցելության՝ խունկ ծխում ու վերադառնում:

Ի դեպ, նախագահի վրա արվող սուղը խիստ պուսպ էր:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌՏՆԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատավ: Որպես ծխի ու փոշու մեջ աշխատողներ, Արևալի տարեց կանայք ամենից ավելի էին ենթակա աչքի տկարություն: Վաղուցվա սովորություն էր՝ տարեց կանայք իրենց մոտ ունենում էին կսկծացնող դեղափոշի, որ աչքին էին դնում աչքը ծարիրող աեղափոշի: Վերջինս սև, ոսկրե բարակ ու հղկված ձողիկ էր, որ պատրաստում ու վաճառում էին վանեցի արհեստավորները:

Արձակցի հարուստ ու տոհմիկ Մինտսի աման ավաղուհին աչքի հեքիմ էր: Աչքի հեքիմությունը

նրա հորենական տոհմից էր դալիս, և նա աղջիկ ժամանակ մորից սովորել էր ու ծերության հասակում սովորեցնում էր իր արդեն թոռաներ հարսին: Դեղորայքի ցանկը՝ շորսից սովելի չէր՝ մի կտոր պղնձարջասպ (ջրամանիկ), քաշմիկ (ոչ մուգ դուլնի խիստ մանր ու տափակ սերմ, որ վաճառում էին վանի խանութներում): Քաշմիկը հատ-հատ շրթացնելով ու ասեղի ծայրով դուրս բերելով դրա աափակ ու դեղին միջուկը, հեքիմը դրանք որոշ շերմության ենթարկելուց հետո, հավանդով փոշիացնում էր, ու դեղանյութը պատրաստ էր: Այսպես՝ ոսկութ (կարմիր դուլնի փայլվուն դեղափոշի) և վերջապես՝ սիլտայ

տեղ (սպիտակ գեղ) կոչված մոխրագույն գեղափոշի:

Վերջին երկու գեղափոշիները գնում էին վանի բաղաձայնությամբ ապրող մի այլ հեքիմ կնոջից, որին անվանում էին Սրպիկ: Արհակցի տարեց կանանց զրպաններում միշտ էլ գտնվում էր սիվտայ տեղը: Այս կծկծացնող գեղերը ամեն օր չէ, որ գործածում էին: Իսկ լույանալուց և դուխր լվանալուց հետո էլ նույն օրը չէին դործածում: Ուստի ինչ, սիվտայ անդն էլ տեղափոխվում էին բաշում աշերին և շատ կանայք իրենց մոտ ունենում էին ու հասկապես ուսուցիչ: Հարմար նկատած ժամանակ բաշում էին աշերներին: Քյոշմիկը, սակայն, դնում էր ինքը՝ հեքիմը, որովհետև նա այդ գեղափոշին ցանում էր վերևի կսպր շրջելով և թև նստապահ հարմար չէր դնում, բաշմիկով բուծում չէր անում, պատճառաբանելով, որ ավելի օր տեղը գեղ դործածելը վնասաբեր է:

Պղնձաբջառուր նա գործածում էր, եթե դրանում էր, որ աշերի կույրերը վան-վանա են բռնել: Այսպես էին կոչվում կույրերի ներքևում դուխացած մանր արնային կծիկները: Շրջում էր վերևի կույր և խիստ զրույթալի կույրին էր բռնում պղնձաբջառուրի կույրը: Արջասպիկ կույրին բռնելու կոչվում էր կապ դալել, իսկ երբ կսպի ներսից դեղ էին ցանում, անվանվում էր կոպ կոխել: Կույր կոխում էին թև՝ բաշմիկով, թև՝ ուսուցիչով:

Աշխատը (աշխատ) կամ խուստուկ (ուժեղ գալ): Աշխատանքն ամենից շատ երևան էր դալիս ամուսնի, մանավանդ կալոցին: Սա միակ հիվանդությունն էր, որի դեպքում առողջներն զրույթանում էին վարակվելուց, սակայն բերին էր հաջողվում վարակից դերծ մնալ: Ամենից շատ աշխատալով վարակվում էին փոքրիկները:

Աշխատավի հիշյալ տեսակի դեպքում աշերից արտահոսում էր գեղին թարախանման հյութ, կույրեր ուռչում էին, և զրպանում էր ուժեղ կսկրծոց, որն էլ կոչվում էր խուստուկ: Այսպես՝ «աշերեր կխուստուկեն» կամ «խուստուկ տաներ» և այլն: Խուստուկը մեղմելու միջոցներն էին՝ փոքրիկ աղջնակի (1—7 տարեկան) մեկ և, մանավանդ, աղջիկ երեխայի մոր կրծքի կաթ լցնելը: Դա խիստ մեղմում էր ցավը: Սակայն խուստուկի դեմ պայքարելու, ավելի ծիշա՝ խուստուկը բուժելու հիմնական միջոցը Շբլխն էր:

Շբլխը պարաստում էին երկու ձևով՝ տաք կամ սառու:

ա) Մի փոքրիկ մաքուր կուռա թոնրան մեջ

տաքացնում էին, ձվի սպիտակուցը թափում սեղ և մի կտոր սպիտակ շիբով խառնում: Տաքացրած և շիբով խառնված սպիտակուցը բաժանվում էր երկու նյութի՝ վճիտ ջուր և կիսեփ սպիտակուց: Այդ ջուրը տաք վիճակում լցնում էին աշերի մեջ, իսկ մյուս՝ մածնանման մասը դնում էին աշերի կույրի վրա: Հիվանդը միառժամանակ աշերը փակ էր պահում:

բ) Թարմ ձվի ծայրը ծակում էին, սպիտակուցը թափում, իսկ գեղնուցի մեջ լցնում մի քիչ մանրացված սպիտակ շիբ ու սկսում ձուռ հարել: Հարված շրախառը գեղնուցը օրը երեք անգամ կաթնեցնում էին աշերի մեջ, Խուստուկը տեղում էր 4—5 օր: Եթե հիվանդությունից հետո աշերի կույրը մնում էին հոսմ, այսինքն՝ ուռած, և երեկոները ծանր էին բացվում ու առհասարակ լրիվ առողջացած չէին լինում, ապա դիմում էին այլ միջոցի: Թոնրան վառ ժամանակ խաշերկալի վրա մի քիչ սպիտակ շիբ էին դնում, մեջն էլ երկու մեխակ: Ջերմացած շիբն սկզբում զառնում էր հեղուկ, ապա վերածվում սպիտակ, փոփոխ զանգվածի: Այդ զանգվածը մի փոքր կտոր շաբարի հետ փոշիացնում էին, երեկոները հիվանդ աշերի կույրին դրսից մի քիչ կարագ էին բռնում, այրված շրափոշին ցանում վրան ու այդպես մնում էր:

Հիշյալ գործողությունը կրկնում էին շարահինգ անգամ: Արդյունքը դրական էր լինում:

Թոզ (կատարակտ): Եթե աշերի վրա երևան եկած սպիտակ բիծը ծաղիկ հիվանդություն հետևում էր, ապա ոչինչ չէին ձեռնարկում: Սակայն պատահում էր, որ դա արդյունք էր լինում զրույթին իջած հարվածի: Նման դեպքում, ութ օր իրար միմյան հասկապես բոցի վրա տաքացրած ջրով, զրույթը լվանում էին ու անմիջապես խուստուկում մի բաժակ յուղ ու մեղրի առաք խառնուրդ: Խաժամանակ արդելում էին աշխատել, ինչպես նաև ուժեղ լույսին նայել:

Մազ: Եթե զանգանան (արախումա) զրույթում խիստ ապրածված այս հիվանդությունը, մանանակին չէր բուժվում, ապա տվյալ մարդու կույրի տակ մազ բուսնելու տխուսափելի էր: Սյն բուսնում էր առավելապես տարեց կանանց աշերում: Բուժման միջոցը երկուսն էր՝ նախ, փոքրիկ ունելիով քաշելը, երկրորդ՝ մաղը կույրին կաշնելը:

Մաղ քաշելը կատարում էին աշերի հեքիմը կամ ձեռներեց ջահել կանայք: Սյն համոզմունքն էր տիրում, որ մաղ քաշելն ավելի է նպաստում մաղի բաղմանալուն, քան մաղը կույրին կաշնելը:

Իսկ մաղր կոպին էին կպցնում հեռակալ կերպ. տաք ասեղի ծայրի վրա էին վերցնում մի աննշան մտանիկ սպիտակ ծամոն և կամ սև-ճարճոտուկ կոշված ռուսի արմատի կաշուն հյուսթը, կպցնում մաղին ու մազը սեղմում կոպին: Մազը պառկած վիճակում կաշում էր կոպին և այդպես էլ մնում մինչև այդ կպցնող նյութի հալվելը, որ երբեմն երկու ամսից ավելի էր դիմտնում:

Ականջացավ: Ականջացավով ավելի շատ տեսնալում էին նորածինները: Նրանց ընդորի դեղատոմսը մեկն էր՝ կաթեցնել մոր կրծքի կաթն ու տաք պահել: Մեծահասակների ականջացավի հիմնական պատճառը համարվում էր դլխի մերսելը: Ուստի առաջին հերթին դիմում էին գլուխը տաք պահելու միջոցին: Տոպրակով տաքացրած աղ էին դնում և դեռ լրիվ չսառած՝ փոխում էին նոր, ավելի տաք տոպրակով, խորոված սոխի ծիլը թաթախում էին ձեթում ու սեղմում տկանջի մեջ: Ուժեղ ու տեղական ցավի դեպքում կաթով կտավատ էին եփում ու այդ լափան (խյուս) տաք-տաք կապում ականջին և համբերությամբ սպասում ցավի հանդսաանալուն:

Առամեացավ: Եթե փտած առամ էր, ապա մի քիչ օդի էին առնում վրան, ծխախոտի ծուխ պահում բերանում, ադ լցնում մի փոքրիկ բամբակի մեջ ու դնում ատամի վրա, սպիտակ շիր դնում ատամի մեջ, չհանգստանալու դեպքում դադում էին ընկուղով: Այսպես. ընկուղի միջուկից մի երկարավուն կտոր ամրացնում էին զուլպա հյուսելու ճաղին, իսկ միջուկի աղատ ծայրը բռնում էին վառ ճրագի վրա մինչև բոցավառվելը և այդպես էլ հպում էին ցավացած ատամին: Եթե այս միջոցն արդյունք չէր տալիս, առամը հեռացնում էին:

Արճակում ատամ հեռացնողը դյուղի ժամհար Արթենն էր, որն այդ ծառայությունը կտարում էր անվճար: Երբեմն Արթենը նվերի անվտն տուկ ստանում էր մի թաշկինակ կամ մի դուլդ դուլպա:

Պատահում էր, որ ցավում էին ընդոր ատամները միասին: Դրան նախազգույն էին ասում: Նավա-դիրին համարյա ոչ մի միջոց չէր օգնում, բայց և այնպես աշխատում էին դուլսը տաքացնել՝ տաք ալի տոպրակ դնելով: Ումանք էլ խաղբբռակ կոշված թունավոր ռուսի սերմերը խառնելով ծխախոտին, դրանակ էին փաթաթում ու ծխում, ծուխը ոչ թե ներս քաշելով, այլ բերտնում պահելով ու ապա դուրս փչելով:

Ոսկրի կտալիելը կամ դուրս ընկնելը: Ոսկրի երկու մասնադեպ-սերտի աղամարդ կար Սրճա-

կում: Սերտի շոշափում էր, եթե դանում էր, որ ոսկորը դուրս է ընկել, մաքմնի տվյալ մասը (ոտք, ձեռք, դաստակ) դնում էր տաք ջրի մեջ, մի-առժամանակ դուրսընթաց մաքում ներքևից վերև և հետո մի ձեռքով վերևի մասն տմուր ընդ-նելով, ներքևի մասն ուժեղ ձգում էր, ապա տաք ու երկարավուն շորի կտորով (վիրակապի ձևով) ամուր փաթաթում ու պատվիրում 2—3 օր այդ-պես պահել:

Երբ սերտի դանում էր, որ ոսկորը կտրված է, ապա մի ուրիշ ուժեղ անձնավորության հետ ձգում էր կոտրածը, տեղը նստեցնում, նոր մի-այն կապում: Կապելը կատարում էին հեռակալ կարգով՝ հում ձվի դեղնուցով շրջալը (սոսնձա-փոշի) շաղախում էին, լցնում համապատասխան կտավե կտորի վրա, ըստ որում, կտավը պետք է լիներ ընդորովին նոր ու ամուր տեսակի, դրա-նով կապում կտրած տեղի շուրջը, հետո մի տյլ շորով էլ փաթաթում, դրա վրա էլ երկու կտոր համապատասխան տախտակ դնում ու նորից փաթաթում:

Եթե կոտրածը թե էր, ապա պատվիրում էր թեղ շալով կտակել կրծքին ու լրիվ անշարժ պահել (հագուստ չհանել-չհագնել), ջանալ մասները միշտ դեպի վեր պահել, երբեմն շարժել, իսկ եթե ոտքն էր, ապա պառկել անշարժ վիճակում, ոտ-քին տալով մի քիչ բարձր դիրք:

Սերտի պատվիրում էր կտրվածք ունեցողին լավ սնել, հատկապես պատվիրում էր կերակ-րել, ըստ հնարավորին՝ խաշով ու զինի խմեց-նել, մասները հաճախ շարժել, որ շփախախտան, իսկ հեռավորում անպայման սերտի ինքն ան-ձամբ պետք է քանդեր կապերն ու սառնեցր:

Բարեհաջող բուժումներին դուրսընթաց պա-տահում էին նաև անբարեհաջող հետեանքներ, որի պատճառով տվյալ անձնավորության ոտքը կամ թեղ ծուխ էր մնում: Սակայն այդ բանի համար ոչ ոքի մտքով չէր անցնում սերտուն պատասխանատվության ենթարկել, ինչպես և հաջողության դեպքում՝ վարձատրել: Հարգալի վերարերմունքն ու շնորհակալական խոսքն էր սերտուն վտրձը:

Մեյ դիխան կյլխացավ (մի կուլից գլխա-ցավ): Սրանով առապողները սովորաբար միջին տարիքի մարդիկ էին, հիմնականում՝ կանայք: Հիվանդությունը միշտ էլ կապում էին մրսելու կամ հոգեկան ուժեղ ցնցումներ ունենալու հա-Համոզմունք կար, որ մեյ դիխան կյլխացավին լրիվ բուժում չկա, բայց կար մեղմելու դարավոր մի միջոց, դա շուպ զանելն էր, որը կիրառում էին

Հիմնականում ուժեղ գլխացավի ժամանակ: Կրու-
կի մեջ շարում էին զուլպա հյուսելու մի քանի
լարակ շուղ և թողնում մինչև կրակի մեջ եղած
մասերը ստանալին կրակի դույն, հետո այդ
շուղերի շիկացած ծայրերով արագ-արագ և
իրարից քիչ հեռու հարվածում էին հիվանդի
լակտտին, ղլխավորապես բունքերին մոտիկ: Երբ
շատուր կորցնում էր իր շիկագույն անսրը, վեր-
ցնում էին հաջորդը շիկացած շուղի կպած ան-
դերի մաշկը սանրիկ ալրվածքներ էր ստանում
(եքեսանց): Ասորոց ակատին քսում էին տալ-
կոնով (խիստ ջերմությամբ ավող, սպիտակ ար-
մաա, սր վաճառվում էր վանի խանութներում,
արեկյան մյուս համեմունքների կողքին) խառ-
նրված օղի և թաշկինակով կապում:

Շուղ դանելը բավականին նուրբ դործ էր
և բոլոր կանայք չէին, որ ընդունակ էին այդ
անելու: Շուղ խփված տեղի ալրվածքները վերքի
չէին փսխարինում, այլ մի փոքր մուգ դույն
էին ստանում ու երկու շարաթվա ընթացքում
անհեանում: Շուղ դանելու երկրորդ օրը քուն-
քերին կոցնում էին երկու կտոր սպիտակ յալսու,
որը պատրաստում էին հետևյալ ձևով:

Նեծված, փոշիացված խունկի, տաք-կոճի և
մի քիչ էլ սև տղպեղի փոշուն ավելացնում էին
սպիտակ ծամոն և ձվի հում դեղնուց, լցնում
օդիով թրջված բոլորսվին նոր կտորի վրա և
փակցնում քունքերին: Յախուն մնում էր քունքե-
րին կպած մինչև ինքն իրեն տոկվելու: Սրանից
դատ, հիշյալ ղլխացավի դեմ պայքարելու ուրիշ
միջոց չունենին:

Մաւնաշուրթ (մաւնաշուրթ): Ժողովրդի մեջ
այն համոզումը կար, թե մաւնաշուրթը կանխ-
իք վերք է: Դրա համար էլ, երբ մատի եղունդի
շրջանում ուժեղ, ծակող ցավեր էին զգացվում,
միաժամանակ էլ նկատվում էր մաշկի որոշ
դունափոխում, ինչպես նաև հիվանդացող մատը
ջերմում էր, աղացույց էր, որ մաւնաշուրթ է
սկսվելու:

Հիվանդացող մաւր սաեղ-սաեղ թաթախում
էին եռացող կաթի կամ դրա չիհնելու դեղքում՝
եռացող ջրի մեջ այնքան, մինչև ցավող մաւի
մաշկը ալրվածքի աստիճանի հասցնելը, մինչև
սպիտակելն ու ծակոցների մեղմանալը: Ընդհատ
ժամանակին ձեռք առնված այս միջոցառումը
կանխում էր մաւնաշուրթի դարդացումը: Զկանխու-
րվելու դեղքում, վերքը բացվելուց առաջ, հասու-
նացնելու նպատակով յուղով ու շաքարով խմոր
էին կալում մինչև վերքը ծակվելը, հետո խորո-
ված սոխի թերի վրա ձեթ էին քսում-կապում

կամ եղան լեղու էին կապում, իսկ եթե ժամա-
նակը ձմեռ էր, ապա թարս կաղամբի տերե:

Այսպես թե այնպես, ժամանակին ձեռք
առնված մատը տրեւր. որին ղուղացիք անվա-
նում էին վալսգուցել. ամենատարածվածն էր:

Խավկոր (խավկուրություն): Այս հիվանդու-
թյունը ոմանք անվանում էին նաև ղալկոր (դիւեր-
վա կույր): Հիվանդության արահայտությունն
այս էր՝ արևի մայր մտնելուց մինչև հաջորդ առա-
վոտ աչքը ղրկվում էր տեսողությունից: Խավկորով
բռնվում էին արեւի ներքո, դաշտում շատ երկար
մնացողները, առավելապես հոստղները:

Խավկորի բուժումը հիվանդին լարդ կերցնե-
լուն էր, ընդ որում, ո՛ր թե խորոված կամ տաղա-
կած, այլ խաշած:

Հիվանդին լողացնում էին կամ ղուլխը կախ
վանում, մի մեծ շորով ղուլխը մինչև ծնկերը
ծածկում ու փոքրիկ կճուճով խաշած լյարդը աա-
լիս նրան: Վերջինս կճուճը ղրկին սպահած ու կոա-
ցած դրա վրա, արագ-արագ ուտում էր տաք
լյարդը և խմում տղտոր լյարդաջուրը:

Ուտելիս հիվանդը աչքերը պետք է բացած
սպահը ղուլխը վրա: Մի քանի անգամ կրկնելուց
հետո (ընդ որում՝ օրը մեկ անգամ) տեսողա-
կան այդ աննորմալ երևույթն անհետանում էր:

Թալ մեջք (թույլ մեջք): Որոշ անշահահասներ,
որոնք քնած տեղը աակները թրջում էին, համար-
վում էին թույլ մեջք ունեցողներ: Նման երևիա-
ներին կիսախորոված փայծաղ էին կերցնում,
ուտելիքի հետ խառնում ու կերցնում էին հում
ձվի կեղեի փոշի, մեջքին սև ծամոնի յախու էին
փակցնում:

Ճնջխուլ (ջնջխուլած): Եթե որեւէ հարվածից
մարմնի որեիցե մասը ջնջխուլ էր, մաշկը կաղ-
անել, բայց արյուն չէր եկել, դա համարվում էր
ավելի վաւնդավոր, քան եթե մաշկը քերծված
ու արյունոտված լիներ: Նման դեպքում դիմում
էին խմորով: Խմորով սպտրասում էին
հետեյալ կերպ՝ թոնրան աաք մոխիրը շաղախում
էին աղաջրով և կապում ջնջխուլած տեղին:

Խաւ առնել: Խաւ առնել էր կոշվում այն
ցավի դղացումը, երբ անաշխատ թողած մկան-
ները շափից ավելի էին լարում, օրինակ՝ երկար
ժամանակ ուղեորություն շկատարածը հանկարծ
երկար ու դժվարին ճանապարհ էր դնում կամ
հնձի լանսովորը մի անգամից շատ հունձ էր
անում: Նման անսովոր ու շափից ավելի աշխա-
տանքից հետո անհնարին էր լինում քայլելը կամ
ասնք, շարժվելը: Սա հենց խաւ առնել էր: Այս-
պիսի դեպքերում խամ առած անդին աղաջուր

էին քսում, իսկ եթե սովորականից ավելի էր արաահայտվում ցավը, թթխմորին ավելացնում էին երկու բուռ աղ և այնքան ալյուր, որ խմորը հաղիվ իրար կաշեր, դրտնակով բաց էին անում և այգ բացված լավաշը գցում եռացող ջրի մեջ, ապա հանում, կապում խամ առած տեղին: Կիսանի թթխմորավաշը տվյալ տեղի վրա կապված էր մնում ամբողջ գիշերը: Մարմնի չեմբուխից ավելի ևս պնդացած այդ խմորը պոկում էին ու հետո աղաջրով կտմ մանկան մեղով լվանում մարմնի ավյալ մասը:

Մայասուլ (թուրք): Այս հիվանդությանը տառապողները, ամոթի ղգացումից, միայն մտերիմներին էին հայտնում:

Այն կարծիքն էր աիրում, որ մայասուլով հիվանդը ինքը պետք է իր ըփշկը լինի: Նման հիվանդները պետք է խուսափեին կծու ուտելուց, ոտքերը պիտի տաք պահեին, թոնիր կախվելիս, այնպես պետք է նստեին, որ նսանլատեղը կաշեր թոնրան աաք շուրթին, շատ սւտեին ճվիկ բանջարը: Դառնալ անուռով մի բույս կար, որ բուսնում էր ամենուրեք: Սա այնքան դառն էր, որ երբ ձնք էիր տալիս, ձնքդ դառնանում էր ու հաց ուտելիս դպացվում: Ահա այս բույսի հյութը քսում էին հետույքին:

Բացի դառուից, կար նաև մի այլ բույս, որ ուղղակի կոչվում էր մայասուլի ծաղիկ: Բաղմաճյուղ ու բաղմաթիվ մանր վարդամանուշակա՝ գույն կամ սպիտակ ծաղիկներով այս բույսը, որ շատ նման է ոսպի ծաղկած թփիկի, շատ շուտ չորանում էր ու խիսա դառնտհամ էր: Մայասուլի ծաղիկը թարմ, թե չորացած, խաշում էին, ջուրը տաք-տաք խմում, ինչպես և խաշված լցնում ամանի մեջ ու վրան նստում:

Տեղեութեն (ղեղեախա): Այս հիվանդությանը տառապում էին մանուկները և այն էլ դողերոցքով հիվանդացածները: Տեղեութեն պոեած մանուկներին լողացնում էին կովի շաուկով, փաթաթում կոեզի քաֆ կոչվող դառն ու մեծ անրենքով ու դրանց մեջ էլ քրտնեցնում: Ոմանք ավելի հարմար էին գտնում մանկանը լողացնել ուտենու տերեխ ջրով ու փաթաթել վերջինիս տերեխ մեջ:

Դա արվում էր հետեյալ ձևով:

Լույսը գեո լրիվ չբացված, քաղում էին մի մաղ ուտենու անրե, բերում լավ եռացնում, ստացված ջրով լողացնում մանկանն ու հետո փաթաթում խաշված տաք անրենքի մեջ: Սրա հետ օգտագործում էին նաև տեղեուց ուլնիկ կոչված մի հուլունք, որը դերրնական էր համարվում:

Մանկանը լողացնելիս հիշյալ հուլունքը գցում էին լողացնելիք ջրի մեջ, իսկ գրանից հետո կախում մանկան պարանոցին՝ շուրջ երկու շաաթ:

Տեղեուց ուլնիկը սաթանման մի շատ խոշոր գեղնագույն հուլունք էր, որ դանվում էր վաղուց Արճակում բնակություն հաստատած շատախցի մի ընտանիքում: Տեղեուց ուլնիկի մասին ժողովրդական այն համոզմունքը կար, որ այն անձրևից հետո երկնքից է ընկնում, և գտնում են միայն ամենաարդար երեխաները:

Այլ էր համոզմունքը, երբ գեղնախտով հիվանդանում էին մեծահասակները: Դա արդեն բացատրվում էր ծանր վշտով կամ հանկարծակիի եկած լինելով՝ խիստ անսպասելիորեն ծանր ըոթ լսելուց: «Հախտոց ի առե» ասում էին շրջապատի մարդիկ և բացաարում, որ «հախտոց հախտոցով կընցնի»: Նման դեպքերում կիրառում էին ապաակելով բուժում: Երբ հախտոցով հանկարծակիի եկած հիվանդը միամիտ նստած էր լինում, բռնված հետաքրքիր գրույցով, հանկուրծ մեկը նրան ապուակում էր: Ապուակվող գեղնախտավորը մինչև կկոահեր իր ապուակվելու դրդապաաաոր, գոնե մի բուպե անցած կլիներ ու կրացվեր լեղիի փակված բերանը, որ «փակվել» էր հախտոց առնելուց:

Սա բուժման մեկ կողմն էր, մյուսը, որ գեղնախտավորը պետք է պաս պահեր, այն էլ՝ մի քանի ամիս: Անդամ նրանք, որոնք կրոնական նախապաշարումներից բարձր էին կանգնած, դարձյալ ենթարկվում էին փորձառուներին ու հիվանդության ընթացքում ձեթ ու միս բուրբուղին չէին ուտում, յուղ, ձու՝ շատ քիչ, դրա փոխարեն խիսա առաա էին դործածում բանջարեղենը, բսա իրենց կարողության՝ միրզն ու քաղցրեղենը:

Տյուղ-տայցոց (ղողեոց): Ծահոուտների աուկայության պատճառով Արճակի ու Խաուակոնիսի բնակչությունը ավելի շատ էր ենթակա դոգէրոցք հիվանդությանը, քան գավառի մյուս պյուղերը: Այս հիվանդներին անպայման խմեցնում էին քինաքինայի փոշի և կամ այդ բույսի կեղեն էին կերցնում: Երկուսն էլ գնում էին Վանի հայկական դեղատնից:

Պաաահում էր, որ դողի ու ջերմի պարբերական նոպաներն անցնում էին, սակայն հիվանդը ունենում էր թեթեւաբուուներ, ոչ բարձր, սակայն տեական ջերմություն, գլխացավ, ախորժակի կորուստ և ուժերի անկում: Աա արդեն կոչվում էր կյազաիլ տյուղ, որը նույնպես բուժվում էր վերը նշված ձևով: Ոմանց էլ միայն մեկ անպամ խմեցնում էին իշկաթուկ, դեղին ներկաաու բույ-

սի կաթ. Սակայն սա շատ համաբաժանություն էր պահանջում, քանի որ առաջ էր բերում սոսկալի սրտխառնոց ու զխապտույտ:

Խունդավ (Ճարբուխ): Սա առհասարակ մտահոգող հիվանդություն չէր համարվում, բայց և անպակաս աշխատում էին շուտ ազատվել դրա պատճառած անախորժությունից, ուստի և միջոցներ էին ձեռք բերում, որոնք հետեւյալներն էին՝ սոխ կամ սխտոր հոտոտելը, օրական մի քանի անգամ կաղույտ շորի կտոր սալելն ու ծուխը քիթը քաշելը, դիշերը իր իսկ վարտիկը հանելն ու դրանով դուխը, քիթն ու բերանը փաթաթելը: Բոլորն էլ համոզված էին, որ խոնցավը վարակիչ հիվանդություն է, այսինքն՝ կպնելով ի, սակայն այդ ուղղությամբ ոչ մի միջոցառման չէին դիմում:

Շորա (գրիպ): Նորան խոնցավից անմիջապես պանազանվում էր և մտահոգում բոլորին: Նարայով հիվանդը ծանր էր տանում ցավը, նույնիսկ ումանց տաքությունն այնքան էր բարձրանում, որ հիվանդը պառնացում էր: Ամենահամուլ ծերուկից մինչև աշխարհ տեսած պրպկտն ու տղամարդիկ պիտակցում էին, նաև անցյալի փորձից էլ եղբայրներն էին, որ եթե շորան ասն մտավ, ապա բոլորին էլ վարակելու է: Սակայն, թե՛ նահապետական մտածելակերպը, թե՛ կենցաղային պայմանները հնարավորություն չէին տալիս հիվանդին առանձնացնելու:

Հիվանդը միաժամանակ ունենում էր հազ ու ռուկուռոցք, ուժեղ ցավեր՝ հոգերում, զխափում ու ախորժակի պակաս:

Ձևոք առնվելիք միջոցներից ամենահիմնականն էր քրտնեցնելը: Հավիտյան կոչված արեւելյան մի կարմրավուն արմատով, որ քրտնեցնելու հատկություն ուներ, օրական մի քանի անգամ թել էին խմեցնում, կերցնում ձեթով խավիժ, խորոված սոխ, մեջը խունկ դրած ու մսխրում խորոված սերկեկի, եռացրած առդաի ծաղիկի աաք ջուրը որդես թել խմեցնում, մատին մի կտոր շոր կամ բամբակ փաթաթում ու հիվանդի բերանը մտցնելով սեղմում քիմքի խորքը, երբեմն մասն այնքան խորն էին տանում, որ հնարավոր լինել կոկորդը պատած կեղևը պոկել, դրսից շոշափվող ուտած դեղձերը հենց դրսից էլ մասած էին անում, ապա ծնոտից բռնելով՝ զլուխը երեք անգամ աջ ու ձախ թեքում: Վերջին դործողությունը կոչվում էր վիզ քաշել: Թե կոկորդ սեղմելը, թե վիզ քաշելը կատարում էին բավականին մասնագիտացած ու ժամանակին երկվորյակ երեխա ունեցած կանայք: Գլխացավը մեղմելու համար հիվանդի ճակատին բոցկի շեր-

տեր էին դնում, իսկ քերտությունը իեղնելու համար ափերի մեջ, քունքերին ու ոտքերի տակ օղի կամ քացախ էին քսում: Շորայով հիվանդին սշխատում էին թարմ միրգ ուտեցնել, ըստ որում, ասենալավը համարվում էր ձմերուկը: Սակայն դա ձմեռը հաղվաղյուտ էր, իսկ շորան ձմեռային հիվանդություն էր:

Նորան առհասարակ վաղանցուկ հիվանդություն էր, տեղում էր ութից տասն օր:

Սաքչամ (քոֆերի բորբոխ): Սա սովորաբար առաջ էր դալիս մրսելուց ու հաբեկում հիվանդատներին: Պատկերավոր խոսքի վարպետ ծերերը սիրում էին բառախաղ անել՝ Սաթրըշամ չի էտր անտեր ցավ, «սաթրըրը օան ի» (ծախում է կյանք):

Հանկարծակի դողը և օերմաստիճանի բարձրացումը, շնառության վատացումը, դիտակցության կորուստը բավական էին փորձերից մարդկանց համոզվելու, որ հիվանդը սաթրչամ է ու փրկությունը շարունակ որոնում էին բրտնեցնելու մեջ:

Արճակցիները սովորաբար հիվանդին քրտնեցնում էին վաղ առավոտյան: Այսպես, կրակը լրիվ հանգած, բայց տաքությունը դեռ պահպանած թոնրան մեջ մի մեծ կտոր աթար էին դրում: Հիվանդը մերկ մտնում էր թոնիրը, ոտքերը դնում աթարի վրա, իսկ թիկունքը սեղմում թոնրան տաք կողերին և այդպես նստած էլ սկսում քրտնել: Հիվանդը թոնրում եղած ժամանակ, թոնրան բերանը վերմակով ծածկում էին, թողնելով մի աննշան օդանցք:

Հիվանդն ինքն էր հայանում, որ արդեն լավ քրտնել է: Այդ ժամանակ տալիս էին շապիկ, վարտիկ և զլուխ փաթաթելու շոր, որոնք հիվանդը հաղնում էր թոնրան մեջ և նույն վերմակով էլ ծածկված դուրս էին բերում թոնրից ու պատկեցնում թոնրան եզրին պատրասասած անկողնում: Չանցած քսան րոպե, թոնիրն արդեն վառված էր լինում, իսկ մինչ այդ, նորից քրտնած հիվանդի հազուստն ու անկողինը փոխում էին: Մնում էր հիվանդին հսկել, որ չմրսեցնի իրեն: Առաջին օրն արգելում էին նրան ոչ միայն զլուխը բարձից բարձրացնել, այլև անդամ ձեռքերը վերմակի տակից հանել:

Սա քրտնեցնելու ընդունված ձևն էր Արճալում:

Սակայն սաթրչամով հիվանդին թոնրում բրտնեցնել հնարավոր չէր: Նրան քրտնեցնում էին «Նեսսոյի քարաբաղնիսի» մի ուրիշ տեսակով: Մեծ կաթսայով եռման ջուրը դնում էին հիվան-

զի անկողնու մեջ (ոտքերի կողմից)։ Կաթնալի
րերտնը ծածկված էր լինում տախտակով, իսկ
եզրերը փաթաթված էին լինում շորով։ Հիվան-
դին ծածկում էին, և նա սոսկալի տանջանքներ
էր զգում մինչև քրանելը։ Քրտնելուց հետո հան-
զըստանում էր, ապա սկսում էին սովորական
ձևով թաց հանդերձներն ու անկողինը փոխել։
Սաթըջամով հիվանդին աշխատում էին կերակրել
շուտ-շուտ, րայց թեթև ուսուցիչներով՝ հավով
ապուր, մսաջուր, քամած մոծուն, խավիժ, խմեց-
նում էին հավուջանով թեյ, խոշարաջուր, թան
և այլն։

Երբ հիվանդության երեք շաբաթն անցնում
էր, վտանգը համարվում էր անցած, թեև ասում
էին, որ մինչև քառասուն օր պետք է հիվանդն
իրեն լավ պահպանի, այլապես կարող է կրկն-
վել։

Այս րոյորը սաթըջամի րարեհաջող րնթացքն
էր։ Լինում էր, որ կատարվում էր հակառակը,
տաք դոյորշիով րավարար քրտնեցնել չէր հա-
ջողում կամ անհասկանալի պատճառներով
հիվանդն օր-օրին, լավանալու փոխարեն ծանրա-
նում էր։ Նման դեպքերում հիվանդատերերը
ապավինում էին փյոսա քաշելուն։ Մորթում էին
մի չաղ ոչխար, տաք մորթու ներսի կողմին ցա-
նում էին տաք-կոճի, առոնի, սև պղպեղի ման-
րացրած փոշի ու դեղափոշով պատված մորթին
փռում հիվանդի մերկ թիկունքի տակ՝ սկսած
ուսադիւխից։ Հիվանդի թեկերը սեղմում էին կող-
քերին ու կրծքի կողմից տոյ մորթին կարում
հիվանդի մարմնի շուրջը։

Մորթու մեջ կարված հիվանդները, որ մեծ
մասամբ գտնվում էին գառանցադին դրության
մեջ, այդպես էլ մնում էին ամրոջ երկու ժամ։
Նրանք անասելի տանջանքներ էին ապրում,
մինչդեռ քրտնելը ուղեքից հոսում էր ներքեւ։
Մորթին քանդելուց հետո, հիվանդին հաղցնե-
լիք հանդերձն ու անկողինը պետք է լինեին խիստ
փափուկ ու տաք, որովհետեւ մորթով փաթաթված
մարմնի մասերը, հատկապես թիկունքը, պատ-
ված էին լինում մանր, կարմրավուն շոր պզուկ-
ներով, որոնք և՛ քոր էին գալիս, և՛ ցավ պատ-
ճառում արդեն քիչ-քիչ դիտակցության եկող հի-
վանդին։

Պետք է ասել, որ փոսար երբեմն ծաւայում
էր իր նպատակին, եթե հիվանդի սիրտը դիմա-
նար և այդ միայն վերջին օրերում չլինեին ձեռ-
նարկած։

Աղբյացավ (փոքրագույն)։ Աղբյացավ սկը-
սում էր լուծով, սակայն սա սովորական լուծից

տարբերվում էր որովայնի շրջանում զգացվող
ուժեղ կծկումներով, նիքերով և արյունալուծով։
Ըստ տիրող համոզմունքի, սա ևս ուժեղ մրսելուց
էր լինում, ինչպես նաև մի այլ աղբյացավով
հիվանդից կանելով (վարակվելով)։ Համոզում
ունեին, որ նման հիվանդների աղիներն այնքան
են նրբանում, որ նման են դառնում դլանակի
թրշված թղթի։

Հիվանդի ստամոքսը տաք շալով ամուր կա-
պում էին, հետույքի տակ ձեթի մեջ եռացրած
թաղիքի տաք կտոր փռում, շիրով քամած մա-
ծուն ուտեցնում, նվիկի շուր խմեցնում, նոտն
կճեպ եռացնում ու խմեցնում, կերակրում ալյու-
րով կամ փոխինդով եփած ճաշով։

Աղբյացավը հաղվադեպ երկացող և րարե-
հաջող ելք ունեցող հիվանդութուն էր։

Պոտուն ակըրկել (պատառ խցիկ)։ Երբ
մեկը րավական երկար ժամանակ որևէ րան կույ
տալիս կերակրափողի ներքեւ մասում ցավ էր
դդում, համոզվում էին, որ «պրոտուն» ի ակըր-
կեւ, այսինքն՝ կերակրափողում ուսուցիչի կտոր
է խցկվել։

Տվյալ անձն առավոտյան, դեռ ոչինչ չկերած,
երկու ձեռքով կախ էր ընկնում որևէ րարձրու-
թյունից (ծառի ճյուղից, գերանի ծայրից և այլն),
այն հաշվով, որ ոտքերը մի մեարաչափ րարձր
մնային դեպքից, րերանը լիքը շուր էր առնում և
մի քանի անգամ ձոձվում էր, հետո ուժգնորեն
ցած թռչում և հենց այդ թռչելու պահին էլ ջուրը
կույ աալիս։

Կար համոզմունք, որ ջուրը պոկելու էր
խցկված պատառիկը, իսկ երբ այդ գործողու-
թյունը ոչ մի արդյունք չէր աալիս, ապա ասում
էին, որ «ակըրկած պրոտուն» իր համար տեղ
է արել և պետք է ուսուցիչն նրա աստիճանարար
լուծվելուն։

Պոտուն խցեկել (պոտուն քեկեկել)։ Եթե ուժից
վեր ծանրություն վերցնելուց անմիջապես հետո
կամ մի քանի օր անց տվյալ անհաաը սկսում էր
որովայնում, ավելի շուտ՝ պորտի շրջանում տու-
կան ցավեր դալ, դրա հետ էլ թեթև սրտխառնոց
և րնդհանուր ուժասպառություն, ապա դա րացա-
տրվում էր նրանով, որ մարդու «պոտուն ինդեր
ի»։ Բուժման ձեւը «պոտուն անելն» էր (պոտուն
դնելը)։

Դստ սաուկում էին մասնադիտացած պառավ-
ները, որոնք առավոտ շուտ, դեռ հիվանդը ծոմը
չլուծած, ջոշափում էին հիվանդի պորտը՝ մինչև
ցավ պաաճառելու աստիճան։ Եվ եթե համոզվում

էին, որ «պորտը տեղից ցած է ընկել», ապա
կրկու րուտ աղ լցնում էին կապուլտ շորի մեջ.
կտուրում այնպես, որ շորի աղատ մնացած ծայ-
րերը միահավասար լինեին, տափակեցնում էին
աղը դնում հիվանդի պորտի վրա, շորի ծայ-
րերը ձևթռտում ու վառում: Երբ շորի ծայրերը
սկսում էին բաց արձակել, նախօրոք պատրաստ-
ված փսթրիկ սեռիկը բերանքսիվայր բռնում էին
բաղի վրա և առտիճանարար մոտեցնում մարմ-
նին՝ բնդհուպ պորտին:

Պորտ դնողն սկզբում փորձում էր, թե ար-
դյոք սեռիկը ամուր կպնի է պորտին ու հետո
կրկ անգամ թևթևակի ոլորումներ էր կատարում:
Որոշ ժամանակից (հինգ-սասը րոպե) հետո
սեռիկը պսկում էին պորտի վրայից՝ օդ բաց թող-
նելուց հետո:

Թե՛ պորտուչ խցկվելը, թե՛ պորտ դնելը մի-
այն կանայք էին կիրառում, և շատ քիչ էր դրս-
կան արդյունք տալիս, բայց հավատում էին:

ՄԱՆԿԱԿԱՆ, ՏԱՐԱՓՈԽԻԿ ԶԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաղիկ: Կենսափորձը ինչպես ուրիշ վայրե-
րի բնակչությանը, այնպես էլ արձակցիներին
Կարակաղնիկ էր ուղևոր, որ ծաղիկը պատվաստի
միջոցով կարելի է դինամիստիկ Սակայն ինչպես
Թուրքիայի ամբողջ գյուղական աղյուսակալու-
թյունը, այնպես էլ արձակցիները (չհաշված
բացառությունները) ձեռները ծալած ուղիսում
էին այդ դարձուրդի անառն ալցելուին, բավա-
րարվելով երեխային պուպենական ձեռով ինամի-
սով:

Մաղիկով հիվանդացած երեխային չէին լու-
սացնում: Որքան էլ թեթև լինեին հիվանդությունը,
այնուամենայնիվ, պահպանում էին անկողնային
փրճակ: Նրա սնունդն ավել ընդ չէին պահում,
որ շոքը չդիպչեր մանկան աչքերին: Անում էին
բաղյրեղենով, առավելապես անպակաս էին ա-
նում չումիչն ու նարթ շաքարը, չէին ուտեցնում
յուղ, ձկն, միս:

Այս հոգաարությունը եթե բոլոր ծնողներն
էլ կարողանային լրիվ կիրառել, ինչ խոսք, որ
նպաստում էր բնդհանուր առողջական վիճակին,
սակայն, ցավաբ, ծաղկապավելուն և կուրանա-
լուն արդյունք չէր հանդիսանում: Կային փորձառու
մարդիկ, որոնք մանկան վրա դոյացած ըշափկե-
րին նայելով, կոհում էին, թե երեխան ծաղկա-
տարվելու է, թե՛ ոչ: Նրանց առնելով, այն ըշափ-
կերը, որոնց մեջանդները փոսիկներ էին, հեք
էին թողնելու՝ ծաղկատեղում էին: Եթե գյուղում մի

երեխա հիվանդանար ծաղկով, մնացած բոլոր
ծաղիկ հանելու տարիք ունեցողները հիվանդա-
նում էին: Կար այն հանդսացուցիչ համոզումը,
որ իրը ծաղիկով հիվանդացածը այլևս երկրորդ
անգամ չէր հիվանդանում: Սակայն փաստերը հա-
կառակն էին ապացուցում:

Կարմուխ: Որպես անհուսափելի հիվանդու-
թյուն, կարմրուկը ևս հայանվելիս բոլոր երեխա-
ներին վարակում էր: Կարմրուկով հիվանդ երե-
խայի խնամքը շատ էր նման ծաղիկով հիվանդ
մանկան խնամքին, այն տարբերությամբ միայն,
որ կարմրուկով հիվանդին դոնե մեկ անգամ
էջի կաթ էին խմեցնում ու շրջապատում կարմիր
պաստառներով: Կարմրուկին ուղեկցում էր թո-
քերի բորբոքումը և երիկամների տկարությունը:

Կարմրուկի մասին ժողովուրդը այն կարծիքն
ունեին, թե առերեսված հեշա անցնող այդ հիվան-
դությունն ավելի շատ է մահացություն տալիս,
քան ծաղիկ հիվանդությունը: Այսպիսի ասաց-
վածք կար՝ «Տյու, խիվընդի աչկ կկուրցուցես,
ես ինոր իոր, մոր աչկ կկուրցուցեմ»:

Կարմրուկ հիվանդությունը Արձակում մոյեդ-
էնց 1915 թ. ապրիլին, Եղան մայրեր, որոնց
հաջողվեց իրենց հիվանդ երեխային շալակել ու
փախչել խոտակոնիս, այնուհետք՝ Կրդլա, առաջ՝
Ավերակի, այդանդից էլ Վան, այնանդից դաղթ
ու հետո դերեղման... Ասկայն եղան նաև կար-
մրուկով հիվանդացած ութ-իննամյա երեխաներ
ևս, որոնք բարձր ջերմության մեջ լինելով, ոչ
յաթաղանի սառը փայլը տեսան, ոչ էլ նրա հար-
վածի ուժն զգացին...

Խոչկուն (ֆուքեշ): Արձակի աղղաբնակչու-
թյունը այս հիվանդությանն էր վերադրում հե-
տեքալ ասացվածքը՝ «էն որ ես կամ, էլ տյուք
ինչացու՞ն եք»,—ասում է խոչկունը ծաղիկ ու կար-
մրուկ հիվանդություններին: Ժողովրդական ո-
ղորմելի միջոցները, ինչպիսիք էին՝ երեխայի
ուռած կոկորդը մատով սեղմելը, նավթ բսելը,
իշու կաթ խմեցնելը և այլն, որոնք սովորական
բուժարարների ժամանակ զրական արդյունք էին
տալիս, բուժելի դեպքում անդոր էին մանկան
կյանքը փրկելու:

Խուլկուկը թեև ուշ-ուշ էր հայանվում, բայց
հայտնվելիս մեծ ավերածություններ էր կատա-
րում:

Կարմուխ: Սա կարմրուկին մի քիչ նմանվող
հիվանդություն էր, կարմիր ցաններով էր պատում
մանկան մաշկն ու դեմքը: Կարմուխն անցնում
էր խիստ բարեհաջող, և երեխան յոթ-ութ օր հետո
լրիվ առողջանում էր:

Խոռոզա (կապույտ հագ): Հանկարծահաս այս հիվանդությունը, հայտնվում էր փոքրահասակների մեջ առավելապես դիշերներն ու շնչարդելում խորը քնած երեխային:

Երբ երեխան սկսում էր խոխոացնել, և կոկորդից սկսում էին աքաղաղի կանչերին նմանվող ձայներ դուրս դալ, անմիջապես ուղարկում էին ժամհարի՝ Արթենի ետևից: Մինչ նրա դալը մի ևրկու գլուխ սոխ և մի բուռ աղ իրար հետ ծեծում ու կապում էին երեխայի գլխի առաջամասին: Եթե դա չէր օգնում, ապա ժամհարի հասնելուն պես ածելիով մաքրում էին հիվանդի գլխի տաշամասը և նույն ածելիով սկսում էին մանր-մանր հարվածներ հասցնել: Մանր-մանր կարտված գանդամաշկից սկսում էր դանդաղորեն դուրս հոսել սև, լերդացած արյուն: Երեխայի շնչառությունն սկսում էր կանոնավորվել, իսկ մաշկին քսում էին օդի, և կանխվում էր թարախակալումը: Խոռոզան տարափոխիկ հիվանդությունների շարքը չէր դասվում:

Խոզուկ: Խոզուկը համարվում էր մրսելուց առաջացած հիվանդություն և միջոցառումն էր՝ գլուխը օդիով թրջելն ու տաք փաթաթելը:

Մառավ փշաշել (ծառավ փաշել): Եթե ութ ամսականից մինչև մեկ տարեկան երեխան անընդհատ նիհարում էր, հրաժարվում ուտելիքից, կառչում մոր սաթինքներին, ջուր էր խմում անհագորեն, նշանակում էր, որ երեխային ծարավը կոտրել է (ծարավը նրան հաղթահարել է), այսինքն՝ ելել է մի որևէ օր, որ երեխան ծարավ է եղել ու մայրը չի հիշել նրան ջուր տալ և ահա այդ օրից մահկիկը ջրից չի հաղենում: Ուրեմն, պետք է նրա ծարավը քաշել: Երեխային պառկեցնում էին մեջքի վրա, ոտքերը մի քիչ ավելի բարձր, քան գլուխը և ծարավ քաջող կինը սկսում էր նրա աղբյուրի առաջամասերի և որովայնի միջև մասաժ անել, հետո որովայնի ներքեը մի քանի անգամ դրուշուրով սեղմել դեպի վեր:

Եթե հիշյալ դործողության ընթացքում երեխայի սաամոքսից լսվեր թեկուղ մի փոքրիկ ձայն («փոռի դոռոց»), ապա երեխան արդեն համարվում էր բուժված:

Մարսվ կոտրածի քաշելը կատարվում էր այդ դործին սովոր մի քանի կանանց միջոցով, որոնք ունեցել էին երկորյակ երեխա:

Մարավ քաշելը ոչ դրական արդյունք էր տվել, ոչ էլ՝ բացասական: Դրա համար շատ երիասարդ մայրեր թերահավատությամբ էին տրամադրված բուժման այս ձևին: Զրի հանդեպ

ունեցած երեխայի տենդոտ հակումն անցնում էր ինքն իրեն, երբ նա սկսում էր քայլել սովորել:

ԲՈՒԺԻԳ ԲՈՒՅՍՆԵՐ

Ինչպես արևելյան ժողովուրդներն ընդհանրապես, այնպես էլ Արձակի դավառի ընկերները սերնդե-սերունդ օգտագործում էին որպես բուժիչ միջոց մի շարք բույսեր: Դրանցից էին.

Եզան լեզու: Մատայում էր վերքից թարախ դուրս քաշելուն: Բացի վերքի վրա դնելու սովորական ձևից, Արձակի հեքիմները, երբ տեսնում էին, որ վերքի բերանը փակ է, եզան լեզվի սերմերը դոմշակովի կամ կովի կաթի մեջ եփում էին և այդ լսիան տաք-տաք կապում վերքին: Այդ նույն հեքիմները խորհուրդ էին տալիս ստամոքսի հիվանդություն ունեցողներին եզան լեզուն խաշել և որպես աղցան ուտել, մանավանդ սերմերը խաշել և ջուրը պարբերաբար սաք-տաք խմել:

Կյաղտիկ ուռ (դադտնի կրծքադեղձ): Եզան լեզվի մի այլ տեսակն է, միայն թե խիստ նեղ ու երկար անոթներով: Եզան լեզվի նման աճում է ամենուր, սակայն ավելի շատ առունների եզրերին: Կյաղտիկ ուռի սերմերը ես օգտագործվում էին վերքեր, ինչպես և տեական ստամոքսային հիվանդություններ բուժելու համար ու համարվում էր ավելի աղդեցիկ, քան Եզան լեզուն:

Հյավի քաֆ (ցրտահարման, ցրտի տեղև): Արտաքին տեսքով շատ է նման բողկի կամ շաղգամի տերևներին, ավելի փափկավուն է, քան եզան լեզուն: Աճում է առավելապես հոսող ջրերի եզրերին: Պատվաները՝ վերքի վրա դնելու համար հյավի թաֆը ավելի նախընտրելի էին համարում, քան եզան լեզուն: Տերևներն ու ալմատները մանրացնում էին, կաթով եփում և կապում վերքին: Եթե վերքի բերանը փակված էր և շուրջը կապտած, ասում էին, թե յարեն հավայի ի առե» (վերքը ցուրտ է առել) և որպես ցրտահարությունը չեղոքացնող միջոց, անմիջապես դիմում էին հյավի թաֆին:

Չոպան դաշալի (հովի ներքնակ): Աճում է առավելապես ընկավայրերից հեռու: Գեանատարած, սպիտակականաչ, մանր ու խավոտ անոթներով բույս է: Գյուղական վիրաբույժները դրա տերևները փոշիացնում էին և ցանում արդեն առողջանալու փուլին հասած վերքերի վրա՝ վերքը չորացնելու նպատակով:

Ուց խոնդառ: Հանրահայտ բույս է, աճում է անջրդի ու անմշակ աարածություններում: Խոլը-

դատի՝ Լորենսն մետրից ավելի բարձրացող ու մտնական լադկից հաստ ցողունները, ներքեից վերև, պնդվում են սանր, դեղին ծաղիկներով և հեռվից ուշադրություն դրավում:

Այդ բույսի անհամար ծաղկաբուսականների մեջ կուտակվում են բազմապիսի բղձեր. անասունները դրանից տերև խալ չեն պոկում: Չորացած խոնկաար աշնանը բազում էին որպես թոնրան կալան:

Նկարագրած սուսորական խոնդստան է. սակայն կա և այնպիսին, որ անդամ մասնաշափ սպիտակ չի ուսիր: Տերեքները դեռնառարած են: Սա որձ, այսինքն՝ չբազմացող խոնկաան է, անրեններն օգտագործում էին որպես պեղանյութ՝ չորացած ու փոշիացած վիճակում:

Խաբրբուկ (բաբրադ): Աճում է ամենուր՝ կրատներին, պարտեզներում, մշակովի թե անմշակ ատրածություններում, խիստ թունավոր բույս է, սուսի բարբադ (ավեր) անվանն է արժանացել: Դրա բաց պույնի ծաղիկները խաժխաժի նման կլոր, անսթաձի սերմնաբանի են փոխարկվում, սրբ ներսից երկու մասի է բաժանվում, սերմնաբանի կախարհիչ և երկու մասից է կաղմորված: (Հաստանալիս կախարհիչ ընկնում է, և միջի մանր ու բազմաթիվ սերմերը թափվում են):

Ատամների ընդհանուր ցավի դեպքում, որին պոզացիոն անվանում էին «նավադի», երբ ոչ մի կերպ ցավը մեղմել չէր հաջողվում, խարրուկի սերմով պլանսի էին փաթաթում և նավադիից սանջվողը ծխում էր այն, ծուխը բերանը պահելով և դուրս փչելով:

Առվուստի ծաղիկ (տոմույաի ծաղիկ): Առվուրական ատմության ծաղիկը շորացնում, փոշիացնում և ցանում էին արդեն առողջացման փուլում պանվազ վերքի վրա՝ այն շորացնելու նպատակով:

Կաբմիլու ավել: Աճում է անմշակ ատրածություններում, օգտագործվում էր որպես ավելու կանանց ծննդաբերության ժամանակ, երբ նկատվում էր, որ ծննդականի ցավերը արագանալու փոխարեն, կանգ են առնում, և ատամները դալիս էր այն համադման, որ կինը մրսած է, կարմիր սովել էին վառում ծննդականին մոտիկ, վերջինիս պոզեցնում ծխացող կրակի վրա:

Պուլ-կաթ: Սա պարզապես ամենադառոր առավել պողի (բոխի) արմատն է, որ հայ ու քուրդ հավիվները սովորաբար պահում էին իրենց մաղախներում որպես ուշխարների վերքերը բուժող սոփնասպիտ միջոց: Սովորաբար ուշխարների պմակի ներքեի մասի նուրբ մաշկը, ինչպես նաև պեղանների արանքները քերծվածքներից որդնո-

տում էին: Պուլ-կաթի մի փոքրիկ կտորը վերքառանդի մեջ սեղմելը բավական էր եղած որդերը սաակեցնելու և ճանճերին հեռու վանելու համար:

Սիվաակ Ետեքրուտուկ: Բուսնում է ամենուրեք: Նեղիկ տերեքներով, արագ նյութավորվող, հողավոր ցողուններով բույս է: Ցողունների յուրաքանչյուր հողի ակից մի դեղեցիկ, կապույտ ծաղիկ է բացվում: Մաղակաթերը խիստ կարճ են լինում: Անասունները չեն մոռանում: Ունի խիստ դառն արմատ, ինքը ևս դառն է: Օգտագործում էին անիվի ու սոնիի արանքը զնելու համար: Այրելով՝ մոխիրը կարագով շաղախում էին, քսուկ պատրաստում ու լծկանների լծաոված վղներին քսում:

Արճակում ասյորդ թուրք պաշտոնյաների ընտանիքներում սիվաակ ճառճոռաուկը դարնանր խաշած ձվի հետ ուտում էին որպես դաղտնի դոզերոցի, ինչպես նաև դեղնախտի բուժիչ միջոց:

Ալյուս-չապրեմ (երիցուկ): Հանրահայտ և ամենուր ատրածված այս ծաղիկը Արճակում ևս համարվում էր հարցուկ: Մեկ առ մեկ պոկելով ծաղիկի թերթերը, հարցնում էին՝ ալյուս-չապրեմ, Ատամնացավի դեպքում, երբ առամի շուրջը ուտելում էր, ալյուս-չապրեմի շորացված ծաղիկները խաշում էին ու առք դոզորշու վրա պահում բերանը:

Տեղա (աուդա): Վայրի տուղտի արմատները օգտագործվում էր օճառի փոխարեն՝ դուխր լվանալիս: Վայրի աուղտը ապիս է ատրեր դուլնի ծաղիկներ: Մաղիկները շորացնում էին և ձմանը եռացնելով, ջուրը թեյի փոխարեն խամեցնում հիվանդներին: Նախընտրում էին հավաքել դեղին ծաղիկները:

Կոնգի բաֆ (տերե): Արա հիմնականում դառր և չափազանց մեծ տերեքներով փաթաթում էին այն փոքր երեխաների մեկ մարմինները, որոնց լույսնում էին կովի շոուկով:

Ճըլնուկ: Արժե հիշատակել նաև այս բույսը, որը շատ առատ բուսնում էր դուղի «Վերին այաշտեր» կոչվող մարդադեանում: Սրա տերեքները աշնանը քաղում և բարալիկ չվաններ էին հյուսում, որպես խսրի հենք: Զյո բարակ չվանների մի քանի հատի միացումից սաանում էին ջրհորից ջուր քաշելու պարաններ:

Ամուսնը Միջագետքի կողմերից Արճակ էր պալիս անդեն քողերի ոչ սավար մի խումբ: Սրանք իջեանում էին դուղի աղբյուրի մոտ, ուտելիքի հետ փոխանակում էին տեսակ-տեսակ ու-

լուսններ (որոնց մեջ և աչքի ուղունք՝ աչքով տա-
լու դեմ) և շրջում էին հիշյալ մարգագետնում,
փորփորում հողն ու հանում ճըլճուկի և մի ուրիշ
րուսի արմատների վրա աճող կաղինաչափ պա-
լարները: Ավղնոցում, ավաղով տրորելով, կեղևա-
հան էին անում սպիտակ միջուկները, արևի
ներքո շորացնում և պարկերը լցնելով վերադառ-
նում էին: Թե ինչի համար էին օգտագործում այդ
պալարները՝ չէին ասում:

ՄԱՔՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Արճակում րաղնիք չկար, լողանում էին՝
ոմանք թոնրատանը մեծ տաշտերի (պղնձե թաշա)
կամ կավաշեն սախենների մեջ, ոմանք՝ փայտի
շուրում:

Կանայք ու աղջիկներն իրենց մաղերը լվա-
նում էին տուղտի արմատով, որն աճում էր
ամենուրեք, սակայն արճակցի կանայք ու աղ-
ջիկները տուղտի արմատը բերում էին դուղի
հեռավոր՝ Վերին տյաշտեր հանդից: Տարին մեկ
անգամ, աշնանը, թաղի ջահել աղջիկներն ու
իրենց երիտասարդ եղբայրները, մեծ խմբերով,
պինված փայտատներով, դնում էին այդ հանդը,
երբեմն նույնիսկ հասնում հառակոնիսի արածե-
րին և փայտաաներով փորում-հանում տուղտի
սպիտակ ու հաստ արմատները:

Լողանալու օրերին մեկ կամ երկու արմատ
քսան-քսանհինգ ռոպե դցում էին տաք ջրի մեջ,
հետո քարի վրա դնելով մի քիչ ծեծում, այնքան,
որ հեշտանար թելիկների ընթանվելը, կապում
էին այնպես, որ սաացվեք փնջիկ: Այդ կապված
փնջիկը կոչվում էր տղտի թնջուկ: Փոքրիկ մի
թնջուկ ընկած էր ամբողջ ընտանիքին: Թրն-
ջուկը դիմելով քսելիս ամբողջ մաղերն ու մար-
միրն ծածկվում էր սպիտակ ու մածուցիկ փր-
փուրով:

Տուղտի արմատով դուրս լվանալը դալիս էր
դարերի խորքից: Այն գլխի մաղերն ու մաջկը
փափուկ պահելու հաակություն ուներ և միա-
ժամանակ մաղերին փայլ էր աալիս:

Հաղուստեղներ լվանալու անհրաժեշտ օճաուը
մեծամասամբ հայթայթում էին իրենք՝ աան-
աիկները՝ տներում օճաո եփելով: Այդ դոր-

ծում լավ հմտացել էին հատկապես մի քանի
տարեց կանայք: Հավաքում էին ամոան ընթացքում
կերած ծիրանի կորիզը (որը դաոն էր), ձեթի
կաղասների տակի նստուկը և միացնելով աշնան
մսացուից ստացված ստամոքսի ու աղիքների
ճարպերին, օճաո էին եփում: Օճաո եփելու հա-
մար անհրաժեշտ նյութերը ձեռք էին բերվում
անվճար:

Քաղնայի մոտերքից հավաքում էին սպիտակ
քարեր, աթարից խարույկ վառում, նախապես ջերտ
առ ջերտ այդ քարերը տեղավորելով աթարի արանք-
ներում և երբ մի քանի ժամ տեղը խարույկը
գաղարում էր վառվելուց, թողնում էին կրակը
մոխրանար (մոխրացման ու սառչելու աեողու-
թյունը երբեմն օրվա էր հասնում), ապա ցրում
էին մոխրակույտն ու հավաքում պատրաստի
չհանդած կիր:

Օճաո եփելու օրը, ըստ կարիքի, բորակաջուր
էին պատրաստում՝ երեք չափ ջրին՝ մեկ չափ
բորակ: Պատրաստի կրաքարերի վրա եփման
ջուր էին լցնում և փալաններով ծածկում: Կրա-
քարը փոշիանում էր, փոշին լցնում էին թոնրան
վրա եռացող բորակաջրի մեջ և հավի թեփի փե-
տուրով փործում այդ խառնուրդը: Ապա խառ-
նուրդից ստացված մաքրված ջրի մեջ լցնում
էին ճարպանյութն ու մի քանի ժամ եռացնելուց
հետո թողնում, որ սառչի: Երեսը կանգնած կիսա-
եփ օճաոն անջատում էին արդեն ուժը կորցրած
ջրից, լցնում նոր, ուժեղ կրարորակային խառ-
նուրդի մեջ՝ եփում մի քիչ էլ, ու օճաոը պատրաստ
էր: Օճաոը սառեցնում էին հողե դանաղան կոտ-
րատված ամանների մեջ ու, այսպիսով, ապա-
հովվում օճաոով:

Հաղուստեղներ լվանալիս օճաոի հետ օգտա-
գործում էին բորակ: Քչերն էին, որ լվացքը շո-
րացնելու համար պարան էին կապում: Լվացքը
փռում էին պատերին:

Մինչև 1909 թ. Արճակում արդուկ գոյություն
չուներ, հետո էլ քչերն էին, որ տներում արդուկ
ուներին: Քիչ խոնավ լվացքը ձեռքով ուղղում էին,
ծալում ու դարսում: Ջրի հատկությունից էր,
կտորեղենի որակից, թե՞ կանանց վառպետու-
թյունից, այնուամենայնիվ, այդ շարգուկված սպի-
տակեղենը հարթ էր լինում:

Հ Ա Վ Ա Տ Ա Լ Ի Ք Ն Ե Ր

ՍՐԱՎԱՅՐԵՐ

Ասպարաժին (Ասավաժաժին): Գյուղից մոտ
երկու վերսա հեռու, արևելյան բլրալանջին, ձե-

ռատունկ անտառիկի կենարոնում էր դառնվում
Արճակու Ասպարաժին կոչված ավերակ վանքը:
Վանքից կանգուն էին մնացել միայն պա-